ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգիական գիտ. XIV, № 8, 1962 Биологические науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ԿՐԿՆԱԿԻ ՄԻՋԳԾԱՅԻՆ ԲԱՐԴ ԵՎ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄՈՅԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Կայուն կերային բազա ստեղծելու գործում կարևորագույն տեղ է պատկանում նաև եգիպտացորենի կուլտուրային։ Այժմ եգիպտացորենի մշակությունը մեծ չափով ընդարձակվել է նաև Հայկական ՍՍՌ-ում՝ ընդգրկելով ոչ միայն ռեսպուբլիկայի հյուսիս-արևելյան, այլև լեռնային շրջանները (Ստեփանավան, Կամո, Մարտունի, Բասարգեչար)։ Եգիպտացորենի ուսումնասիրության, տարբեր սորտերի վարքագծի բնութագրության ուղղությամբ Կամոյի շրջանում աշխատանքներ է կատարում Երևանի Պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի Դարվինիզմի և գենետիկայի ամբիոնը։

Աշխատանքի նպատակն է եղել պարզել, թե եգիպտացորենի սորտերից և հիբրիդներից որո՞նք են ավելի լավ հարմարվում Կամոյի շրջանի պայմաններին, ուսումնասիրել նրանց բերքատվությունը, աճման դինամիկան, կողրերի հասունացումը։ Աշխատության մեջ տրված է միայն որոշ ավելի աչքի ընկած հիբրիդների նկարագրությունը։ Ուսումնասիրության համար վերցվել են այնպիսի կրկնակի միջգծային բարդ, սորտագծային և այլ հիբրիդային խմբավորումներ, որոնք բերվել են Կրասնոդարի Սելեկցիոն կայանից, ինչպես և Համամիութենական Բուսաբուծության ինստիտուտից։ Մեր փորձերը դրվել են սորտափորձարկման ձևով՝ երեք կրկնողություններով—1957—1959 թվականներին. աղյուսակում տրված է ստացված տվյալների միջինը։

1958—1959 թվականների դարնանային անձրևները և վաղ երևան եկած աշնանային ցրտահարությունները ունեցան այն բացասական ազդեցությունը, որ, համեմատած 1957 թվականի հետ, այն հիբրիդները, որոնք այդ տարին հասել էին մոմային և կաթնամոմային հասունացման, 1958—1959 թվականներին չհասան նույնիսկ կաթնային հասունացման (տե՛ս աղյուսակը)։ Օրինակ՝ Կրասնոդարսկայա 4 սորտագծային հիբրիդը, որի կողրերը Կամոյի շրջանի պայմաններում չեն հասունացել. 1957 թ. սեպտեմբերի 20-ին նրա կողրերը գտնվում էին մոմային հասունացման շրջանում, իսկ հետևյալ տարիներին նույնիսկ ոչ մի հասունացում չեն տվել։ Սակայն նրա բույսերը փարթամ էին, բարձրությունը հասնում էր 160—225 սմ-ի, 1—2 կողրերով։ Կրասնոդարսկայա 5 հիբրիդը, որի կողրերը հասան մինչև մոմային հասունացման միայն 1957 թվականին, աչքի ընկավ իր կանաչ զանգվածով։ Եթե 1957 թվականին մեկ բույսի միջին կշիռը 550 գ-ից չէր անցնում, ապա 1959 թվականին այն հասավ մոտավորապես 950 գ-ի, 210 սմ բարձրությամբ։ Կրասնոդարսկայա 1/49 հիբրիդի բույսերի բարձրությունը Կամոյի շրջանի պայմաններում

հասնում է 150—200 սմ, իսկ մեկ չհասունացած կողրի կշիռը՝ 140 գ-ի։ Այս երեք հիբրիդային խմբավորումներն ունեն լավ կանաչ զանգված՝ սիլոսի համար, բայց հատիկներ չունեն։ Սրանց հետ համեմատած, իրենց ավելի լավ են դրսևորել Համամիութենական Բուսաբուծության ինստիտուտից բերված հիբրիդները, որոնք սակայն 1958 և 1959 թվականներին նույնպես կողրերի հասունացում չտվին. դրա պատճառը մասամբ նաև վաղ բերքահավաքն էր։

Բույսերի կենսականության ուսումնասիրությունը
Կամոյի շրջանի պայմաններում, 1957—1959 թթ.

Հիբրիդի անունը		1957 թ.			1958 թ.			1959 թ.		
		Հասունացումը	Մեկ բույսի բարձր. սմ-ով	Մեկ բույսի կշիռը գ-ով	Հասունացումը	Մեկ բույսի բարձր. սմ-ով	Մեկ բույսի կշիռը գ-ով	Հասունացումը	Մեկ բույսի բարձր. սմ-ով	Մեկ բույսի կշիռը գ-ով	Մեկ կողրի միջին կշիռը
Վիր-37	կաթնամոմային	144	484	—	191	859	—	180	816	183
Վիր-42	կաթնամոմային	131	432	—	177	873	—	196	622	145
Վիր-114	կաթնամոմային	145	453	—	178	990	—	187	566	100
Վիր-156	մոմային	138	663	—	—	—	—	207	783	138
Կրասնոդարսկայա 4	մոմային	160	475	—	184	750	—	225	897	177
Կրասնոդարսկայա 5	մոմային	150	543	—	183	890	—	210	944	175
Կրասնոդարսկայա 1/49	մոմային	146	495	—	186	420	—	205	720	139

Հիշատակության արժանի է Վիր-37 հիբրիդը, որի բույսերի կողրերը 1957 թվականին հասան կաթնամոմային հասունացման։ Կամոյի շրջանի պայմաններում Վիր-37-ի 1957—1959 թվականների փորձարկումը պարզել է, որ բույսերը եղել են փարթամ, ունեցել են մինչև 191 սմ բարձրություն, մեկ չհասունացած կողրի կշիռը՝ 183 գ։ Փորձարկված բոլոր հիբրիդներն էլ, այդ թվում և Վիր-37-ը, աճում են ու տալիս փարթամ վեգետատիվ զանգված, սակայն նրանց զարգացումը ձգձգվում է։ Թեև Վիր-37-ը հասնում է բավականին մեծ բարձրության, բայց նրա ծաղկումն ուշանում է և վեգետացիայի վերջում ոչ միայն լրիվ չի հասունանում, այլև չի հասնում նույնիսկ կաթնամոմային հասունացման։

Վիր-42 հիբրիդի արժանիքները շատ են. այն Կամոյի շրջանում շրջանացված հիբրիդ է և տալիս է բարձր բերք, սակայն Վիր-42-ը՝ ցանված մեր փորձադաշտում, իր վեգետատիվ զանգվածով տարբերվում է այն Վիր-42-ից, որը ցանված է կոլտնտեսային դաշտերում. վերջինս ավելի փոքր է, ոչ փարթամ։ Դա մեծ մասամբ բացատրվում է սխալ ցանքով. սերմերը ցանվում են հողի մեջ խրտր հետևից, առանց 35—40 սմ հեռավորության։ Ինչպես երևում է աղյուսակից, մեր փորձադաշտում Վիր-42-ի միջին բարձրությունը հասնում է մինչև 196 սմ-ի, իսկ մեկ բույսը կշռում է 873 գ. (1958 թ.)։ Կրասնոդարսկայա 4, Կրասնոդարսկայա 5 բույսերի կշիռը անցնում է Վիր-42-ից. այնպես որ, չնայած այն շրջանացված է, սակայն փորձերը ցույց են տալիս, որ Կամոյի

շրջանում կարող են աճել նաև այլ հիբրիդներ, որոնք իրենց բերքատվությամբ գերակշռում են նախորդից։

Լավ սիլոսանյութ են Կամոյի շրջանի պայմաններում նաև Վիր-114 ու Վիր-156-ը, որոնք նպաստավոր պայմանների առկայության և լավ մշակելու դեպքում տալիս են բարձր բերք։ Լեռնային շրջաններում կլիմայական պայմանները՝ օդի և հողի մշտական խոնավությունը, համեմատաբար ոչ բարձր ջերմաստիճանը նպաստում են սննդանյութերի կուտակմանը, կանաչ զանգվածի մեծացմանը, տերևների խոշորացմանը։ Իսկ բերքահավաքի ժամանակ լեռնային շրջաններում, այդ թվում նաև Կամոյի շրջանում, բույսերի ցողուններն ու տերևները լինում են կանաչ, մսալի և կարող են թարմ անասնակեր հանդիսանալ։

Այսպիսով, յուրաքանչյուր հիբրիդի բերքատվությունը ամեն տարի տարբեր է։ Նշանակում է՝ կլիմայական պայմանները մեծ ազդեցություն ունեն բույսերի աճման և զարգացման վրա։ Օրինակ՝ եթե Վիր-114 հիբրիդի մեկ բույսը 1957 թվականին կշռում էր 453 գ., ապա 1958 թվականին կշռում էր 990 գ., իսկ 1959 թվականին՝ 566 գ.։

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ Կրասնոդարսկայա 5, Վիր-37 հիբրիդները իրենց բերքատվությամբ ոչ միայն չեն զիջում Վիր-42 հիբրիդին, որը շրջանացված է, այլև գերազանցում են։ Անհրաժեշտ է փորձերը շարունակել այնքան ժամանակ, մինչև որ եգիպտացորենի բազմաթիվ փորձարկվող հիբրիդներից կընտրվեն այնպիսիները, որոնք Կամոյի շրջանի հողակլիմայական պայմաններում կապահովեն սիլոսային զանգվածի բարձր բերքի ստացումը։ Կարելի է ասել, որ եգիպտացորենի մշակությունը Կամոյի շրջանում անհրաժեշտ է և այն հանդիսանում է հեռանկարային կուլտուրա։

Երևանի Պետական համալսարանի
Կենսաբանական ֆակուլտետի
Դարվինիզմի և գենետիկայի ամբիոն

Ստացվել է 6.V 1962 թ.

А. В. АВЕТИСЯН

ИЗУЧЕНИЕ ДВОЙНЫХ СЛОЖНЫХ МЕЖЛИНЕЙНЫХ ГИБРИДОВ И ГИБРИДНЫХ ГРУППИРОВОК КУКУРУЗЫ В УСЛОВИЯХ РАЙОНА ИМ. КАМО

Резюме

Опыты проводились в условиях района им. Камо. Цель работы была — выяснить, какие сорта и гибриды кукурузы лучше приспосабливаются в условиях района им. Камо. При хорошей обработке почвы и соблюдении правил агротехники кукуруза в горном районе дает высокий урожай зеленой массы.

Исследования показывают, что гибриды Краснодарская 5, ВИР-37 своей урожайностью не только не уступают районированному ВИР-42, но даже превосходят его.